

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՎՈՒՇԵՑԻ

(Ծննդյան 800-ամյակի առիթով, 1181—1225)

Մայիս ամսվա առաջին օրերին Բերդ ավանում, Շամշադինի շրջանային կոմիտեի և Հայկական ՍՍՀ Սինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախաձեռնությամբ տեղի է ունեցել գիտական կոնֆերանս՝ նվիրված միջնադարի մեծավաստակ եկեղեցական ու մատենագիր, խոշոր մանկավարժ ու անվանի ուսուցչապետ, հոչակավոր գիտնական ու հայրենասեր, Խորանաշատ վանքի և դպրոցի հիմնադիր Վանական վարդապետ Տավուշեցու ծննդյան 800-ամյակին:

Կոնֆերանսի ընթացքում ընթերցվել են Տավուշ գավառի պատմությանը, մշակութային ժառանգությանը և մանավանդ Վանական վարդապետ Տավուշեցու կյանքին, մանկավարժական, մատենագրական վաստակին ու նրա շինարարական գործունեությանը նվիրված բովանդակալից և արժեքավոր զեկուցումներ, այդ թվում՝ «Շամշադինի մշակութային ժառանգությունը III—I հազարամյակում», «Տուհք-Տուս-Տավուշ գավառի պատմությունը», «Խորանաշատի ճարտարապետական համալիրը և նրա վիմագրերը», «Վանական Տավուշեցին և Խորանաշատի դպրոցը», «Վանական Տավուշեցու մատենագրական ժառանգությունը», «Խորանաշատը որպես հայ գրչության օջախ» և այլ թեմաներով շահեկան ուսումնասիրություններ:

Հայ ժողովրդի պատմությունից հայտնի է, որ ԺԳ դարի սկզբներին Զաքարյան իշխանների գլխավորությամբ թոթափվում է մեր երկրում թուրք-սելջուկյան լուծը և կենտրոնական, հյուսիսային ու հյուսիս-արևելյան Հայաստանի մեծ մասում ստեղծվում է հայկական հզոր իշխանապետություն, որի հովանու ներքո էլ ծաղկում են հայ գիրն ու գրականությունը, արվեստն ու արհեստները, բուռն թափ են ստանում եկեղեցական շինարարությունն ու ժողովրդական հայրենաշինությունն ու քաղաքաշինությունը (Տես այս մասին «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1975, էջ 197—305):

Հայրենական այս վերազարթոնքի պայմաններում էլ ասպարեզ է իջնում ԺԳ դարի մեծագույն գիտնականն ու մանկավարժը՝ Վանական վարդապետ Տավուշեցին:

Վանական վարդապետի կյանքի, մանկավարժական, մշակութային և շինարարական գործունեության և մատենագրական վաստակի մասին շահեկան տեղեկություններ է հաղորդում նրա աշակերտ, ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ (Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան 1961, էջ 178, 218, 243, 270, 310, 326, 330, 338, 344, 346):

Վանական վարդապետը ծնվել է 1181 թվականին Տավուշ գավառի (այժմյան Շամշադինի շրջան) հայ շինականի բազմանդամ ընտանիքում:

Պատմական Հայաստանի 15 աշխարհներից մեկը Ուտիքն էր, որն ուներ 9 գավառներ, որոնցից մեկը Տավուշն էր:

Տավուշ գավառի մեջ էին մտնում այժմյան Ղազախի, Աղստևի, Թովուզի և Շամշադինի շրջանները:

Հայաստանի այդ շրջանները հարուստ են

եղել պատմական հուշարձաններով, եկեղեցիներով, վանքերով, որոնց մեջ նշանավոր է հանդիսացել Վանական վարդապետի կառուցած (1206 թ.) Տավուշի Խորանաշատ վանքը, որպես ԺԳ դարի հոգևոր-մշակութային կյանքի փառավոր կենտրոն:

թվականին վերադառնում է հայրենական իր գավառը և ժողովրդական հանգանակությամբ 1215—1220 թթ. կառուցում Խորանաշատ վանքը, «վասն յոլով եկեղեցեացըն, որ ի նմա, ընկալաւ զանուն որ կայ հանդէպ Երգվանից Բերդին և ի թիկանց



Խորանաշատ վանք

Վանական վարդապետը աշակերտել է ԺԲ դարի մեծ մատենագիր, օրենսգետ և մանկավարժ Մխիթար Գոշին (մահացած 1213 թ.), Նոր Գետիկ վանքում, վանք, որը նրա համար եղել է հոգևոր, մտավոր իմաստով «տեղի սննդեան»: Վանականը վարդապետական իր աստիճանը ստացել է Մխիթար Գոշից:

Կիրակոս Գանձակեցին, որը Խորանաշատ վանքի հռչակավոր դպրոցում աշակերտել է Վանականին, նրան անվանում է «այր արթնամիտ, սուրբ և պարկեշտ, յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի և վարդապետական բանիւ քան զամենեսին՝ որ ի ժամանակին էին գերազանցեալ, ծննդական մտօք՝ յարմար բանիւք»:

Մխիթար Գոշի մոտ իր ուսումն ավարտելուց հետո Վանական վարդապետը 1206

Գարդմանայ» (Գանձակեցի): Այստեղ Վանականը բացում է իր համբավավոր դպրոցը, ուր գալիս են Հայաստանի բոլոր գավառներից ուսանողական մեծ խմբեր. «դեգերէին առ նա ուսման աղագաւ, ոչ միայն վարդապետական բանիւ, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն» (Գանձակեցի):

ԺԳ դարի թաթարական արշավանքները Արևելյան Հայաստանում խանգարում են Վանականի հոգևոր-կրթական, մանկավարժական-մշակութային խաղաղ գործունեությունը և ավերում՝ Խորանաշատ վանքը: Վանականը, սակայն, չի հուսահատվում և իր դպրոցը փոխադրում է «ի սահմանս Տավուշ բերդոյ... իւրովք աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս, ի կատարս բարձրագոյն քարի միոջ որ կայ հանդէպ գեղջն, որ Լորուտն կոչի... և շինեալ էր յայրի անդ ե-

կեղեցի մի փոքրիկ և անդ դադարէր գաղտութեամբ... և անդ կայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածասէր: Եւ բազումք գային առ նա և ուսանէին զբանն վարդապետական ի նմանէ»: Իսկ մեծ դաբունապետը՝ «աղբիւրաբար արբեցուցանէր ամենեցուն զբան վարդապետական» (Գանձակեցի):

Ջալալ-Էդ Դինի և թաթար-մոնղոլների կրկնվող արշավանքների ժամանակ, ոչ միայն ավերվում է Խորանաշատ վանքը և փակվում՝ Վանականի դպրոցը, այլ նաև 1235 թվականին թաթարները գերեվարում են Վանականին՝ իր մի քանի աշակերտների հետ: Վանականը ազատվում է ժողովրդի հանգանակությամբ գոյացած 80 դահեկան մի մեծ փրկագին վճարելով, իսկ նրա աշակերտ Կիրակոս Գանձակեցին փախչում և ազատվում է:

Գերությունից Վանականը վերադառնում է դարձյալ Խորանաշատ վանք, վերանորոգում այն, բացում կրկին իր դպրոցը. «Առնէր շինուածս երևելիս և զբան վարդապետութեան ուսուցանէր այնոցիկ, որ ժողովուէին առ նա ամենայն գաւառաց»:

Վանական վարդապետը «մի գեղեցիկ տիպարն է իր դարի շինարար ու տոկուն ուսուցչի: Նրա կյանքը հոյակապ մի դրվագ է, թե ինչպես Մխիթար Գոշի և ուրիշների աշակերտները բազում «գրեանս հաւաքեալ» գրատներ շինելով, ափոում էին գիտության լույսը և հայկական իշխանությունների մեջ արևելյան խուլ անկյուններում, ծաղկում էր մշակույթը, լուսավորության գործին նվիրված անձերի անդուլ ջանքերով» (Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 188—189):

Վանականը մահանում է 70 տարեկան հասակում, 1251 թվականի մարտի 18-ին և իր ցանկության համաձայն թաղվում է Խորանաշատ վանքի արևելյան կողմը գտնվող «աղքատաց գերեզմանատանը». «Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք ի թաղումն նորա և մեծ սգով և տրտմութեամբ ողբացին յոյժ, զի զրկեցան ի լուսաւոր վարդապետութենէն Երանելւոյն և ի հոգեշահ Բանից» (Գանձակեցի):

Վանական վարդապետը ֆիզիկապես էլ եղել է տպավորիչ անձնավորություն. «անձամբ չափահասակ, մեծերես և փոքրաքիթ, լայնամօրուս և փառահեղ... քաղցրատես և շնորհալից»:

Վանական վարդապետը թողել է նաև մատենագրական հարուստ և արժեքավոր ժառանգություն: «Համբաւատենչ և արդիական վարդապետն Վանական... աստէն թողեալ անուն քաջութեան յաշակերտս իւր ի գիրս գանձուց եկեղեցւոյ... զոր ամբարեաց ի շնորհացն Աստուծոյ և ի յստակ մըտաց ծննդականաց», վկայում է նրա նշանավոր աշակերտ՝ Վարդան վարդապետ Արևելցին (Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 191):

Վանականի գրչին են պատկանում Հին Կտակարանի գրքերի մի շարք մեկնություններ, ապա՝ «Խրատ դաւանութեան», «Յաղագս Տարեմտին», «Պատճառք Առաջաւորաց պահոցն», «Համեմատութիւն Հին և Նոր Կտակարանաց», «Գովեստ հայ ազգի», «Բան և խոստովանութիւն հաւատոյ», «Հարցումն Զանազանք և պատասխանիք բարառնաբար, Վահրամայ վարդապետի և պատասխանիք վարդպետին Վանականայ», որը իր ժամանակի շատ բնագավառների հանրագիտարան է համարվել, «Տեսութիւն «ուրախացիր Պսակ կուսից» շարականի, և այլն. (Վանական վարդապետի մատենագրական վաստակի մասին տես Հ. Համազասպ Ոսկեան, «Հովհաննես Վանական և յուր դպրոցը», Վիեննա, 1922, էջ 25—35):

Իսկ մի այլ աշակերտ, Վանականի «Բազում որդիներից» մեկը, Մաղաքիա աբեղան, նրա մասին գրում է. «Ի դառն ժամանակիս փայլէր իբրև զարեգակն սուրբ հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արեւելեան երկրորդ արևելք անուանեալ, ...նոյնպէս և գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիրակոս, Առաքեալն և Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ... այլև բազում որդիս ի փառս ածին, ձրի բաշխելով զտիրական խաչանիշ գաւազան (վարդապետական գավազան տալու մասին է խոսքը) նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց» (Մաղաքիա Աբեղայի պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 12):

Վանական վարդապետը զբաղվել է նաև իր ժամանակի Հայ Եկեղեցին հուզող հարցերով: Նա մասնակցել է 1204 և 1205 թվականների Լոռիի և Անիի եկեղեցական ժողովներին և գրել է իր ժամանակակից պատմությունը, «զբովանդակ իրս՝ զբան և զգործ այսմ ժողովոյս գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեանն, զի ականատես էր նա իրացն եղելոց և ականջալուր» (Գանձակեցի):

Վարդան Արևելցին նույնպես վկայում է, որ «մանրամասնաբար Հայրն մեր և ընդ սուրբս Աստուծոյ փառաւորեալն Վանական

վարդապետն» գրել է մանավանդ 1236—1251 թվականների հայ ժողովրդի թաթարմոնղոլների տիրապետության ժամանակ կրած չարչարանքների և նահատակության պատմությունը:

«Վանականի գրած պատմությունը, ցավոք, չի մնացեր» (Մ. Աբեղյան), և Հովհաննես Սարկավագ վարդապետի «Պատմութեան» հետ համարվում է հայագիտության ամենաթանկ կորուստներից մեկը:

Վանական վարդապետը Խորանաշատ վանքում իր եկեղեցական-շինարարական, լուսավորական-մանկավարժական գործունեության մասին թողել է շուրջ 40 վիմագիր արձանագրություններ, որոնք պայծառ վկայություններն են նրա մեծ ու հմայիչ անձնավորության, նրա հասցրած մեծավաստակ վարդապետ աշակերտների և նրա թողած մատենագրական ժառանգության:

Հ. Ա.